ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«24» հոկտեմբեր 2016թ. N 97

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 23-ի N303-Ա, N303-Ա, N317-Ա, N329-Ա և Հայաստանի Հանրապետության թիվ 21 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 23-ի N117-Ա և N127-Ա որոշումները, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2016 թվականի հոկտեմբերի 10-ի N01/16.1/4189-16 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգինա, Արտիմետ, Բաղրամյան (Բաղրամյան), Դողս, Ծիածան և Ջանֆիդա համայնքներում համայնքի նոր ղեկավարների ընտրության կապակցությամբ համայնքապետարաններում ընդունման-հանձնման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել տասնութ աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2016 թվականի հոկտեմբերի 24-ի
N-97 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Գևորգյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄ տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ.

Անդամներ՝

Ա. Դարբինյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ.
Լ. Հարությունյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի գլխավոր մասնագետ.
Կ. Պետրոսյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ.
Ա. Պողոսյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ:

Հանձնողներ՝

Արգինա համայնքի նախկին ղեկավար՝ Մուշեղ Գրիգորյան

Արտիմետ համայնքի նախկին ղեկավար՝ Զավեն Միրզախանյան

Բաղրամյան (Բաղրամյան) համայնքի նախկին ղեկավար՝ Կայծակ Մկրտչյան

Դողս համայնքի նախկին ղեկավար՝ Մեսրոպ Ադամյան

Ծիածան համայնքի նախկին ղեկավար՝ Խաչիկ Գևորգյան

Ջանֆիդա համայնքի նախկին ղեկավար՝ Ռաֆիկ Եղիազարյան

Ընդունողներ՝

Արգինա համայնքի նորընտիր ղեկավար՝ Ռոստամ Արոյան

Արտիմետ համայնքի նորընտիր ղեկավար՝ Վարդան Միրզախանյան

Բաղրամյան (Բաղրամյան) համայնքի նորընտիր ղեկավար՝ Արա Սահարյան

Դողս համայնքի նորընտիր ղեկավար՝ Գրիշա Հարությունյան

Ծիածան համայնքի նորընտիր ղեկավար՝ Վաչիկ Գրիգորյան

Ջանֆիդա համայնքի նորընտիր ղեկավար՝ Կամսար Ղորղանյան

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***